**ՀՀ Շիրակի մարզի «Արթիկի №5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ**

**«Հետաքրքրաշարժ խնդիրներ և տրամաբանական խաղեր» խմբակի ծրագրի բացատրագիր**

«Հետաքրքրաշարժ խնդիրներ և տրամաբանական խաղեր» խմբակի ծրագիրը ներկայացված է աղյուսակի տեսքով: Աղյուսակները կազմված են հետևյալ բաժիններից՝

1. Թեմայի անվանումը, ժամաքանակը
2. Նպատակները
3. Վերջնարդյունքները
4. Բովանդակությունը

Ծրագրում առանձնացված են որոշակի թեմաներ, որոնք համապատասխանում են սովորողների նախասիրություններին, հետաքրքրություններին ու պահանջմունքների բավարարմանը:

Ծրագրում նշված է ընդհանուր ժամաքանակը ուսումնական տարվա համար, թեմայի վերնագիրը, տրամադրվող ժամաքանակը, նպատակները, ակնկալվող վերջնարդյունքները՝ հիմնական շեշտը դնելով սովորողի գիտելիքների, կարողունակությունների ու հմտությունների զարգացման վրա:

**«Հետաքրքրաշարժ խնդիրներ և տրամաբանական խաղեր» խմբակի ծրագիր**

**(Շաբաթական՝ 1 ժամ, տարեկան՝ 34 ժամ)**

Խմբակի նկարագիր

Հետաքրքրաշարժ խնդիրները և տրամաբանական խաղերը զարգացնում են աշակերտների մտավոր ունակությունները: Խաղերի միջոցով զարգանում են երեխաների ըմբռնողությունը և ուշադրությունը, դիտողականությունն ու հիշողությունը, ամրապնդվում ու ընդլայնվում են դպրոցում ձեռք բերված գիտելիքները: Հետաքրքրաշարժ խնդիրները և խաղերը երեխաների մոտ առաջացնում են հետաքրքրություն մաթեմատիկայի նկատմամբ: Երեխաները ինքնուրույն դատողություններ կանեն, կբացահայտեն մաթեմատիկայի աշխարհի գաղտնիքները, մտքի թռիչքներ կունենան:

**Արտադասարանային պարապմունքների ուսումնական պլան**

| Դասընթացի անվանումը | Հետաքրքրաշարժ խնդիրները և տրամաբանական խաղեր |
|---|---|
| Դասընթացի նպատակը | Զարգացնել ստեղծագործական միտքը և երևակայությունը, հնարամտությունը, դժվարին իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակությունը, ինքնուրույն դատողություններ անելու կարողությունը: |
| Վերջնարդյունքներ | Ակտիվ և պատրաստակամ կմասնակցեն խմբակին:<br>Կզարգանա խնդիրներ լուծելու կարողությունը:<br>Կզարգանա տրամաբանությունը:<br>Կկարողանան արագ հաշվարկ կատարել:<br>Կզգան մաթեմատիկայի հմայքն ու մեծությունը:<br>Ելք կգտնեն դժվարին իրավիճակներում: |

| | |
|---|---|
| | Հեշտությամբ կյուրացնեն դասագրքի նյութերը: Կզարգանա ինքնուրույն դատողություններ անելու կարողությունը: ԿԿարողանան լուծել գլուխկոտրուկներ, խաչբառեր: Կդրսևորեն տրամաբանական և սրամիտ մտածողություն, արագ կողմնորոշվելու ունակություն, ուշադրության կենտրոնացում: |
| Շաբաթական պարապմունքների քանակը | 1 |
| Ընդգրկված աշակերտների դասարանային միջակայքը | 1-4 դասարաններ |

| **Համար** | **Թեմա** | **Նպատակը** | **Ժամ** |
|---|---|---|---|
| 1 | Գծապատկերներով խնդիրների լուծում | Գծապատկերների միջոցով համառոտագրել խնդիրները և լուծել | 2ժ |
| 2 | Կռահման խնդիրներ | Զարգացնել ուշադրությունը, կռահելու կարողությունը | 2ժ |
| 3 | Հետաքրքրաշարժ խնդիրներ | Զարգացնել հետաքրքրությունը, բարձրացնել գիտակցական ակտիվությունը: Կարողանան ինքնուրույն հաղթահարել դժվարությունները, հանդես բերել սրամտություն: | 2ժ |
| 4 | Տրամաբանական խնդիրներ | Զարգացնել մտածելու, տրամաբանելու կարողությունները: | 2ժ |
| 5 | Հնարամտություն պահանջող խնդիրներ | Զարգացնել տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողությունը: Ստուգել հնարամտությունը: | 2ժ |
| 6 | Կատակ-խնդիրներ | Ստուգել մտքի սրությունը: | 2ժ |
| 7 | Հանելուկ-խնդիրներ | Զարգացնել ըմբռնողությունը, հիշողությունը: | 2ժ |
| 8 | Զվարճալի խնդիրներ | Ստուգել սրամտությունը: | 2ժ |
| 9 | Զվարճալի մաթեմատիկա մուլտ-հերոսների մասնակցությամբ | Հնարավորություն կտա իրենց սիրած մուլտ-հերոսնորի հետ մտնել թվերի զարմանահրաշ աշխարհ: | 2ժ |
| 10 | Թվերի զարմանահրաշ աշխարհում | Զարգացնել տրամաբանական և սրամիտ մտածողությունը: | 2ժ |
| 11 | «Չեմ ասում» | Կարողանան կատարել արագ հաշվարկ: | 1ժ |
| 12 | Վայրկյանական գումարում | Զարգացնել արագ հաշվելու կարողությունները: | 1ժ |
| 13 | «Կախարդական» թվային եռանկյունի | Կարողանան տրապետել տրամաբանական վարժանքների լուծման մոդելների և մոտեցման ձևերին: | 1ժ |
| 14 | Լուցկին նաև խաղալի՞ք է | Կարողանան կատարել պահանջվող ձևափոխությունները: | 1ժ |

| | | | |
|---|---|---|---|
| | | Կզգան մաթեմատիկայի հմայքն ու մեծությունը: | |
| 15 | Տառաշղթաներ | Զարգացնել հնարամտությունը: Սեղծել միջառարկայական կապ մաթեմատիկայի ու մայրենիի միջև: | 1ժ |
| 16 | Ժամացույց | Զարգացնել կռահունակությունը: | 1ժ |
| 17 | Մոգական քառակուսիներ | Զարգացնել դժվարին իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակությունը: | 1ժ |
| 18 | Կռահի՛ր հաջորդը | Զարգացնել տրամաբանական մտածողությունը, ուշադրությունը կենտրոնացնել: | 1ժ |
| 19 | Օրինաչափություններ | Կարողանան պարզել թվային օրինաչափության բանալին և գտնեն հաջորդ թիվը: | 1ժ |
| 20 | Մաթեմատիկական խաչբառեր | Ձևավորել մաթեմատիկական խաչբառեր լուծելու կարողություններ: | 2ժ |
| 21 | Գաղտնագրեր | Կարողանան տրամաբանել և տառերի օգնությամբ գտնել թաքնված թվերը: | 2ժ |
| 22 | Որոշել տարիքը | Զարգացնել տրամաբանությունը, հմտանան թվաբանական գործողությունների կատարման մեջ: | 2ժ |

Կատարող՝ Արթիկի №5 հիմնական դպրոցի դասվար Օ. Թորոսյան

Օգտագործված գրականության ցանկ

Առաքելյան Դ.Կ. «Զվարճալի մաթեմատիկա», 2011թ.

Մ.Թ. Հայրիյան «Հետաքրքրաշարժ խաղեր և զարմանահրաշ թվեր» (կազմ. և ռուս. թարգմ.): Երևան:1980թ.

Ս.Ա. Սարգսյան «Յուրօրինակ առաջադրանքներ մաթեմատիկայից»: Երևան: Զանգակ.2013թ.

Ս.Ա. Սարգսյան «Մաթեմատիկական ցերեկույթներ»: Երևան: Արևիկ.2011թ.

Ա. Հակոբյան, Ն. Խրիմյան «Տրամաբանական խաղեր»,2010թ.

Ս. Դարբինյան «Տրամաբանական խաղեր»,2009թ.